ԵԳԻՊՏԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 4-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ այցելեց 120 հոգուց բաղկացած եգիպտահայ ուխտավորների մի ստվար խումբ՝ ներկա լինելու Մայր տաճարում մատուցվող կիրակնօրյա սուրբ պատարագին և ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները:

Առավոտյան ժամը 10-ին Վեհարանի ընդունարանում Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց խմբի անդամներին և բարի գալուստ մաղթեց նրանց մայր հայրենիք և հայ հավատքի կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ընդունելությանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Ընդունելության ընթացքում խմբի ղեկավար Վ. Հովակիմյանը եգիպտահայ ուխտավորների անունից հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետին ուղղյալ հետևյալ սրտագին խոսքով.

«Վեհափառ Տեր,

Եգիպտահայ թեմի՝ Կահիրեի և Աղեքսանդրիո հայոց եկեղեցիներու հոգաբարձությունները այս տարի կազմակերպեցին այս ուխտագնացությունը ի Հայաստան և ի Ս. Էջմիածին: Մենք եկած ենք այսօր այս սրբավայրը՝ հայտնելու Ձեզի ոչ միայն մեր անձնական հավատարմությունը, որդիական հարգանքն ու ակնածանքը, այլև ամբողջ եգիպտահայ գաղութի Ձեր վավակներունը, որոնց գլուխը կգտնվի մեր արժանավոր առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, հայտնելու Ձեզի նաև որդիական սերը Կահիրեի թեմական ժողովի ատենապետ տիար Պոլ Քիլիջյանի և Աղեքսանդրիո թեմական ժողովի ատենապետ տիար Մարտիկ Զարպհանելյանի:

Մեր սկզբնական բաղձանքն էր ներկա ըլլալ սրբալույս մյուռոնի օրհնության, ինչպես նաև Ձերդ Սրբության ծննդյան 75-ամյակի և քահանայական ձեռնադրության քառասնամյակի հանդիսություններուն, սակայն մեր կեցության ժամկետը 12 օրով հառաջվեցավ, և մենք կմեկնինք 13 սեպտեմբերին: Ուստի պահ մը ամենքս մտքով կփոխադրվինք սեպտեմբեր 25-ին տեղի ունենալիք մյուռոնօրհնության հանդիսության և կմաղթինք, որ Ձեր միջոցավ, Ձեր աղոթքներով և բովանդակ հայ ժողովուրդի հավատքի ուժով, աստվածային նախախնամական կորությունը անպակաս ըլլա մեր ժողովուրդին վրա, և Ձեզի, Վեհափառ Տեր, երկար և երջանիկ տարիներ, որպեսզի մեր ժողովուրդը վսյելե Ձեր հովանին և Ձեր իմաստուն ղեկավարությունը:

Սփյուռքի մեջ հայերս կճանչցվինք իբրև կրոնական համայնք: Ազգային մեր ինքնությունը կպահենք շնորհիվ մեր կրոնական, այսինքն՝ հոգևոր պատկանելիության և հետևաբար մեր սուրբ Եկեղեցին ազգային կրոնական մեր դիմագծի մեծագույն ապդակը է:

Արտասահմանի այլազան ժողովուրդներու հսկա վանգվածներուն մեջ հայությունը փոքրամասնություն մըն է, կաթիլ մը օվկիանոսին մեջ և ենթակա ձուլվելու: Բայց այդ

կաթիլը, այդ փոքրամասնությունը շնորհիվ իր աշխատանքի, ձեռներեցության, մանավանդ իր ամրակուռ հավատքին, կգոյատևե և կպահե իր ինքնությունը, քանի չէ ուրացած իր սուրբ Եկեղեցին, Ս. Էջմիածինը, իր պապենական ավանդությունները, ազգային բարքերը, իր մշակույթը: Եվ ինչպես հին մյուռոնը կխառնվի նորին՝ պահելու համար ժամանակի և անջրպետի համեմատությունը, նույնպես սփյուռքը կվերանորոգվի իր հաճախադեպ այցերով մայր հայրենիք, իր հոգեկան և մշակութային կապերով, իր նայվածքով, որ միշտ ուղղված է ձյունասպիտակ Արարատի գագաթին:

Մեր մոտ Եկեղեցին և ազգությունը այնպես միախառնված են իրարու, որ կարելի չի վանանք բաժնել: Ս. Էջմիածնի արևը պայծառ է ամեն հայու հոգիին մեջ: Ս. Էջմիածինը հայ ժողովուրդի նավահանգիստն է, ներշնչարանը, ուժը և զորությունը: Տա Աստված, որ այդ լույսը միշտ վառ մնա մեր մեջ:

Խոնարհաբար մատչելով ի համբույր Ձեր սուրբ Աջույն՝ կխնդրենք, որ ընդունիք մեր բոլորի որդիական հարգալից սիրո զգացումները»:

Այս առիթով եգիպտահայ ուխտավորների խմբի կողմից, իբրև սրտագին նվեր, Նորին Սրբությանը հանձնվեց ոսկյա ձեռակերտ մի լանջախաչ:

Ընդունելության վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ խմբի անդամներին տալով իր հայրական պատգամները:

Ժամը 11-ին եգիպտահայ ուխտավորները, Վեհարանից ուղեկցելով հայրապետական թափորին, մուտք գործեցին Մայր տաճար, ուր ներկա եղան սուրբ պատարագի արարողությանը: